## ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## N «ՀՀՄՆ-ՄԱԱՇՁԲ-18/52»

ք. Երևան «11» 06 2018 թ.

Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությունը, ի դեմս նախարարության կանոնադրության հիման վրա գործող աշխատակազմի ղեկավար Ս. Մուրադյանի, մի կողմից, և «Անտարես» ՍՊԸ-ն, ի դեմս կազմակերպության կանոնադրության հիման վրա գործող տնօրեն՝ Ա. Մարտիրոսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է գրականության հրատարակման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

### 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Պահանջել կատարելու մակետի հաստատման փուլում որոշակի հիմնավորված փոփոխություններ ձևավորման աշխատանքում.

բ) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

գ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողը էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե.

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2. Գրքի հանրայնացմանն ուղղված բոլոր միջոցառումներում. (շնորհանդես, հոբելյանական երեկո, մամուլի ասուլիս, մամուլի հաղորդագրություն և այլն) պարտադիր հրապարակել ՀՀ մշակույթի նախարարության կողմից ֆինանսավորված լինելու և պետական պատվերով հրատարակված լինելու հանգամանքը:

2.4.3. Պայմանագրի գործողության ժամկետի ավարտին հաջորդող 3 տարիների ընթացքում պատվիրատուի կողմից հավելյալ տպագրություն պատվիրելու դեպքում այն իրականացնել միայն տպագրական աշխատանքի համար պահանջվող արժեքով՝ բացառելով հրատարակչական մասը:

2.4.4 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.5 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը կամ դրա մի մասը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը 2 օրինակ (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 3 օրինակ (հավելված N 3):

3.1.1 Աշխատանքի փուլը (մակետի հանձնում) Կատարողի կողմից ներկայացվում է Պատվիրատուի ընդունմանը ոչ ուշ, քան սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված ժամկետներում՝ Պատվիրատուին ուղարկելով հրատարակության մակետը (ները), կատարված Աշխատանքի փուլի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 3 օրինակ (Հավելված N 3) և Աշխատանքի փուլի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը 2 օրինակ (Հավելված N 3.1):

3.1.2 Աշխատանքն ամբողջությամբ Կատարողի կողմից ներկայացվում է Պատվիրատուի ընդունմանը ոչ ուշ, քան սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված վերջին ժամկետում՝ Պատվիրատուին ներկայացնելով տպագրված հրատարակության օրինակը (ները), կատարված Աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 3 օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը 2 օրինակ (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, երբ կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Սահմանված ժամկետում պատվիրատուի կողմից Աշխատանքի նմուշը ընդունվելու դեպքում Կատարողը իր միջոցներով 10 աշխատանքային օրվա ընթացքում աշխատանքն ամբողջությամբ տեղափոխում և հանձնման-ընդունման արձանագրությամբ փոխանցում է «Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ-ին: «Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ-ի կողմից ստորագրված հանձնման-արձանագրությունը ստանալուց հետո Պատվիրատուի ներկայացուցիչը 5 աշխատանքային օվա ընթացքում կնքում և

...արողին է փոխանցում Աշխատանքի հանձնման-ընդունման արձանագրության մեկ ...րինակը կամ աշխատանքը չընդունելու դեպքում՝ պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է 4 750 000 (չորս միլիոն յոթ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ՝ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենքով սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների

...տանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և

…նցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Պայմանագիրը կազմված է 14 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ մշակույթի նախարարություն
Հասցեն՝ 0010, ք. Երևան, Վազգեն Սարգսյան
փող.3 Կառավարական տուն 2,
հեռ.՝ 58-51-96, 58-51-78
ՀՎՀՀ 02508054, հ/հ 900011012862
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչությունում

______________ Ս. Ամիրխանյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«Անտարես» ՍՊԸ,
Հասցեն ք. Երևան, Մաշտոցի 50 ա/1,
հեռ. 58-76-69,
էլ. փոստ՝ antares@antares.am
ՀՎՀՀ 02519531,
հ/հ 1930032650660100
«Կոնվերս բանկ» ՓԲԸ

______________ Ա. Մարտիրոսյան
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված
« 11 » 06 2018 թ. կնք
«ՀՀՄՆ-ՄԱԱԾՁԲ-18/52» ծածկագրով պայմանագ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | կատարման | | |
| | | | | | | | | ժամկետը* | |
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | հասցեն | Աշխատանքի փուլի | Աշխատանքն ամբողջությամբ |
| 1 | 79971100-3 | **1. Աշխատանքի անվանումը՝**<br>Գրիգոր Անձրյան «Մահարիական» գրքի հրատարակման աշխատանքների ձեռքբերում<br>**2. Գնվող աշխատանքի էության համառոտ շարադրանքը**<br>Գրիգոր Անձրյանի աշխատասիրությամբ հրատարակության է պատրաստվել Գուրգեն Մահարու երկերի լիակատար ժողովածուն 15 հատորով: Դա մոտ 40 տարվա աշխատանքի արդյունք է: Այդ տարիների ընթացքում Անձրյանը հրատարակել է նաև բազմաթիվ հոդվածներ ու ուսումնասիրություններ, որոնք ամբողջապես ներկայացնում են հայ գրականության մեծերից մեկին Գուրգեն Մահարուն և նրա ապրած բարդ ու հակասական ժամանակը:<br>**3. Աշխատանքի համար անհրաժեշտ չափորոշիչների նկարագրությունը**<br>**3.1 Ընդհանուր բնութագրիչներ՝ այդ թվում**<br>Չափը 60 x 84 1/16<br>Միջուկի չափը 20x14 սմ (+ - 1 սմ)<br>Ծավալը 30 առնվազն տպագր. մամուլ (480 էջ)<br>Տպաքանակ՝ 200 օրինակ:<br>**3.2 Միջուկի թղթի բնութագրիչները՝ այդ թվում**<br>Տեսակը օֆսեթ<br>Կշիռը՝ 70 գ/ք.մ, 1.5 ուռ.<br>Ճերմակության առավելագույն չափը՝ ISO 2470/%D65 ստանդարտով (առավելագույնը՝ 96%)<br>Անթափանցելիության նվազագույն չափը 90% (ISO2471)<br>**3.3 Տեքստի բնութագրիչներ՝**<br>Բուն տեքստի տառաչափը՝ 10-11<br>Միջտողային հեռավորությունը 1.2-1.5<br>Օգտագործվող տառատեսակը GHEA Grapalat<br>Շապիկը՝ N5 կազմապատ, լամինացված<br>Տպագրության տեսակը օֆսեթ:<br>Պահպանել լուսանցքների համար ընդունված | դրամ | 4500 | 900000 | 200 | Ք. Երևան, Տերյան 72 | 01.10.2018 թ. | 20.11.2018 թ. |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | չափանիշները:<br>**4. Աշխատանքի որակական ցուցանիշները՝ հիմնված ՀՀ կողմից սահմանված տեխնիկական և որակական բնութագրերի (ստանդարտների) վրա**<br>Հրատարակության տպագրությունը պետք է լինի որակյալ, վրիպակներից զերծ և համապատասխանի ГОСТ 4.482-87, 7.4-95,7.53-01, ՀUS 311-09 չափանիշներին,<br>Հրատարակության 1 տպագրական մամուլում (միջին հաշվով) վրիպակների քանակը 3-ից ավելի լինելու դեպքում Պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել ընդունել այն.<br>**5. Աշխատանքի հետ կապված այլ պահանջների և ընթացակարգերի համառոտ նկարագրությունը**<br>5.1 Աշխատանք կատարողը պատվիրատուին է ներկայացնում հրատարակության մակետը ՝ 30.0 տպագրական մամուլ:<br>5.2 Հրատարակության անորակ օրինակները կատարողը վերահրատարակում է իր հաշվին 10-օրյա ժամկետում: | | | | | | |
| 2 | 79971100-3 | **1. Աշխատանքի անվանումը՝**<br>Լևոն Բաշալյան «Նորավեպեր և պատմվածքներ» գրքի հրատարակման աշխատանքների ձեռքբերում<br>**2. Գնվող աշխատանքի էության համառոտ շարադրանքը**<br>2018 թվականին լրանում է հայ տաղանդավոր նորավիպագիր Լևոն Բաշալյանի ծննդյան 150-ամյակը: Սա հրաշալի առիթ է մոտ 60-ամյա ընդմիջումից հետո վերջապես Հայաստանում առանձին գրքով հրատարակել նրա փայլուն նորավեպերն ու պատմվածքները:<br>**3. Աշխատանքի համար անհրաժեշտ չափորոշիչների նկարագրությունը**<br>**3.1 Ընդհանուր բնութագրիչներ՝ այդ թվում**<br>Չափը՝ 60 x 84 1/16<br>Միջուկի չափը 20x14 սմ (+ - 1 սմ)<br>Ծավալը 13 առնվազն տպագր. մամուլ (208 էջ)<br>Տպաքանակ 200 օրինակ:<br>**3.2 Միջուկի թղթի բնութագրիչները՝ այդ թվում**<br>Տեսակը՝ օֆսեթ<br>Կշիռը՝ 70 գ/ք.մ, 1.5 ուժ.<br>Ճերմակության առավելագույն չափը՝ ISO 2470/%D65 ստանդարտով (առավելագույնը՝ 96%)<br>Անթափանցելիության նվազագույն չափը 90% (ISO2471)<br>**3.3 Տեքստի բնութագրիչներ՝**<br>Բուն տեքստի տառաչափը 10-11<br>Միջտողային հեռավորությունը 1.2-1.5<br>Օգտագործվող տառատեսակը GHEA Narek<br>Շապիկը Դեկորատիվ թուղթ 285 գ<br>Տպագրության տեսակը՝ օֆսեթ:<br>Պահպանել լուսանցքների համար ընդունված չափանիշները:<br>**4. Աշխատանքի որակական ցուցանիշները՝ հիմնված ՀՀ կողմից սահմանված տեխնիկական և որակական բնութագրերի (ստանդարտների) վրա** | դրամ | 3250 | 650000 | 200 | Ք. Երևան, Տերյան 72 | 01.10.2018թ | 20.11.2018 թ. |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Հրատարակության տպագրությունը պետք է լինի որակյալ, վրիպակներից զերծ և համապատասխանի ГОСТ 4.482-87, 7.4-95,7.53-01, ՀՍՏ 311-09 չափանիշներին.<br>Հրատարակության 1 տպագրական մամուլում (միջին հաշվով) վրիպակների քանակը 3-ից ավելի լինելու դեպքում Պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել ընդունել այն:<br>**5. Աշխատանքի հետ կապված այլ պահանջների և ընթացակարգերի համառոտ նկարագրությունը**<br>5.1 Աշխատանքը կատարողը պատվիրատուին է ներկայացնում հրատարակության մակետը՝ 13.0 տպագրական մամուլ:<br>5.2 Հրատարակության անորակ օրինակները կատարողը վերահրատարակում է իր հաշվին 10-օրյա ժամկետում: | | | | | | | |
| 3 | 79971100-3 | **1. Աշխատանքի անվանումը՝**<br>Գրիգոր Հակոբյան «Հոդվածներ» գրքի հրատարակման աշխատանքների ձեռքբերում<br>**2. Գնվող աշխատանքի էության համառոտ շարադրանքը**<br>2018 թվականին լրանում է հայ տաղանդավոր գրականագետ Գրիգոր Հակոբյանի 60 ամյակը:<br>Անկախության շրջանի հայ գրականության նվիրված նրա բազմաթիվ ուսումնասիրություններ ու հոդվածներ դեռ մնում են մամուլի էջերում, և հոբելյանը հրաշալի առիթ է դրանք մեկ գրքում ի մի բերելու համար:<br>**3. Աշխատանքի համար անհրաժեշտ չափորոշիչների նկարագրությունը**<br>**3.1 Ընդհանուր բնութագրիչներ՝ այդ թվում**<br>Չափը 60 x 64 1/16<br>Միջուկի չափը 20x14 սմ (+ - 1 սմ)<br>Ծավալը 13 առնվազն տպագր. մամուլ (208 էջ)<br>Տպաքանակ 200 օրինակ:<br>**3.2 Միջուկի թղթի բնութագրիչները՝ այդ թվում**<br>Տեսակը՝ օֆսեթ<br>Կշիռը 70 գ/ք.մ, 1.5 ուռ.<br>Ճերմակության առավելագույն չափը՝ ISO 2470/%D65 ստանդարտով (առավելագույնը 96%)<br>Անթափանցելիության-նվազագույն չափը 90% (ISO2471)<br>**3.3 Տեքստի բնութագրիչներ՝**<br>Բուն տեքստի տառաչափը 10-11<br>Միջտողային հեռավորությունը 1.2-1.5<br>Օգտագործվող տառատեսակը GHEA Grapalat<br>Շապիկը 300 կավճապատ<br>Տպագրության տեսակը օֆսեթ:<br>Պահպանել լուսանցքների համար ընդունված չափանիշները.<br>**4. Աշխատանքի որակական ցուցանիշները՝ հիմնված ՀՀ կողմից սահմանված տեխնիկական և որակական բնութագրերի (ստանդարտների) վրա**<br>Հրատարակության տպագրությունը պետք է լինի որակյալ, վրիպակներից զերծ և համապատասխանի ГОСТ 4.482-87, 7.4-95,7.53-01, ՀՍՏ 311-09 | դրամ | 3000 | 600000 | 200 | ք. Երևան, Տերյան 72 | 01.10.2018 թ. | 20.11.2018 թ. |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | չափանիշներին,<br>Հրատարակության 1 տպագրական մամուլում (միջին հաշվով) վրիպակների քանակը 3-ից ավելի լինելու դեպքում Պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել ընդունել այն:<br>**5. Աշխատանքի հետ կապված այլ պահանջների և ընթացակարգերի հստակ նկարագրությունը**<br>5.1 Աշխատանք կատարողը պատվիրատուին է ներկայացնում հրատարակության ծավալը՝ 13.0 տպագրական մամուլ:<br>5.2 Հրատարակության անորակ օրինակները կատարողը վերահրատարակում է իր հաշվին 10-օրյա ժամկետում: | | | | | | | |
| 4 | 79971100-3 | **1. Աշխատանքի անվանումը՝**<br>Մարկո Պոլո «Աշխարհի նկարագրությունը. Հրաշքների մասին» գրքի հրատարակման աշխատանքների ձեռքբերում<br>**2. Գնվող աշխատանքի էության համառոտ շարադրանքը**<br>Գիրքը բովանդակում է 13-րդ դարի վենետիկցի ճանապարհորդ Մարկո Պոլոյի Ուղեգրության արևելահայերեն ամբողջական թարգմանությունը կատարված ֆրանսերեն վերջին լավագույն հրատարակությունից: Մեզ՝ հայերիս համար, Մարկո Պոլոյի Ուղեգրությունը նշանակալից է նրանով, որ արժեքավոր տեղեկություններ է հաղորդում ժամանակի հայկական բնակավայրերի և հայության վերաբերյալ: Առանձին գլուխներ է հատկացրել Մեծ և Փոքր Հայաստաններին, մի դեպքում նկատի ունենալով Հուլավյան ցեղիշխանության տակ գտնվող բուն Հայաստանի նահանգները, մյուս դեպքում՝ Կիլիկյան հայկական թագավորությունը. Բուն Հայաստանի քաղաքներից Մարկո Պոլոն առանձնացրել է Երզնկան՝ գովաբանելով նրանում ծաղկած արհեստագործությունը:<br>**3. Աշխատանքի համար անհրաժեշտ չափորոշիչների նկարագրությունը**<br>**3.1 Ընդհանուր բնութագրիչներ՝ այդ թվում**<br>Չափը 60 x 84 1/16<br>Միջուկի չափը 20x14 սմ (+ - 1 սմ)<br>Ծավալը 32 առնվազն տպագր. մամուլ (512 էջ)<br>Տպաքանակ 200 օրինակ:<br>**3.2 Միջուկի թղթի բնութագրիչները՝ այդ թվում**<br>Տեսակը՝ օֆսեթ<br>Կշիռը՝ 70 գ/ք.մ, 1.5 ուռ.<br>Ճերմակության առավելագույն չափը՝ ISO 2470/%D65 ստանդարտով (առավելագույնը 96%)<br>Անթափանցելիության նվազագույն չափը 90% (ISO2471)<br>**3.3 Տեքստի բնութագրիչներ՝**<br>Բուն տեքստի տառաչափը՝ 10-11<br>Միջտողային հեռավորությունը 1.2-1.5<br>Օգտագործվող տառատեսակը GHEA Grapalat<br>Շապիկը՝ N5 ստվարաթուղթ, լամինացված<br>Տպագրության տեսակը՝ օֆսեթ:<br>Պահպանել լուսանցքների համար ընդունված | դրամ | 7500 | 1500000 | 200 | ք. Երևան, Տերյան 72 | 01.10.2018 թ. | 20.11.2018 թ. |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | չափանիշները:<br>**4. Աշխատանքի որակական ցուցանիշները՝ հիմնված ՀՀ կողմից սահմանված տեխնիկական և որակական բնութագրերի (ստանդարտների) վրա**<br>Հրատարակության տպագրությունը պետք է լինի որակյալ, վրիպակներից զերծ և համապատասխանի ГОСТ 4.482-87, 7.4-95,7.53-01, ՀՍՏ 311-09 չափանիշներին,<br>Հրատարակության 1 տպագրական մամուլում (միջին հաշվով) վրիպակների քանակը 3-ից ավելի լինելու դեպքում Պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել ընդունել այն:<br>**5. Աշխատանքի հետ կապված այլ պահանջների և ընթացակարգերի հստակ նկարագրությունը**<br>5.1 Աշխատանք կատարողը պատվիրատուին է ներկայացնում հրատարակության մակետը ՝ 32.0 տպագրական մամուլ:<br>5.2 Հրատարակության անդրանիկ օրինակները կատարողը վերահրատարակում է իր հաշվին՝ 10-օրյա ժամկետում: | | | | | | | |
| 5 | 79971100-3 | **1. Աշխատանքի անվանումը՝**<br>Սիմոն Վրացյան «Հայաստանի Հանրապետություն» գրքի հրատարակման աշխատանքների ձեռքբերում<br>**2. Գնվող աշխատանքի էության համառոտ շարադրանքը**<br>Սիմոն Վրացյանի «Հայաստանի Հանրապետություն» աշխատությունը Առաջին Հանրապետությանը վերաբերվող կարևոր վավերագրերից է:<br>**3. Աշխատանքի համար անհրաժեշտ չափորոշիչների նկարագրությունը**<br>**3.1 Ընդհանուր բնութագրիչներ՝ այդ թվում**<br>Չափը 60 x 84 1/16<br>Միջուկի չափը 20x14 սմ (+ - 1 սմ)<br>Ծավալը 40 առնվազն տպագր. մամուլ (640 էջ)<br>Տպաքանակ 200 օրինակ:<br>**3.2 Միջուկի թղթի բնութագրիչները՝ այդ թվում**<br>Տեսակը օֆսեթ<br>Կշիռը 70 գ/ք.մ. 1.5 ուռ.<br>Ճերմակության առավելագույն չափը՝ ISO 2470/%D65 ստանդարտով (առավելագույնը 96%)<br>Անթափանցելիության նվազագույն չափը 90% (ISO2471)<br>**3.3 Տեքստի բնութագրիչներ՝**<br>Բուն տեքստի տառաչափը 10-11<br>Միջտողային հեռավորությունը 1.2-1.5<br>Օգտագործվող տառատեսակը CHEA Koryun<br>Շապիկը N5 ստվարաթուղթ, լամինացված<br>Տպագրության տեսակը՝ օֆսեթ.<br>Պահպանել լուսանցքների համար ընդունված չափանիշները:<br>**4. Աշխատանքի որակական ցուցանիշները՝ հիմնված ՀՀ կողմից սահմանված տեխնիկական և որակական բնութագրերի (ստանդարտների) վրա**<br>Հրատարակության տպագրությունը պետք է լինի որակյալ, վրիպակներից զերծ և համապատասխանի | դրամ | 5500 | 1100000 | 200 | Ք. Երևան, Տերյան 72 | 01.10.2018 թ. | 20.11.2018 թ. |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ГОСТ 4.482-87, 7.4-95,7.53-01, ՀՍՏ 311-09 չափանիշներին,<br>Հրատարակության 1 տպագրական մամուլում (միջին հաշվով) վրիպակների քանակը 3-ից ավելի լինելու դեպքում Պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել ընդունել այն:<br>**5. Աշխատանքի հետ կապված այլ պահանջների և ընթացակարգերի հստակ նկարագրությունը**<br>5.1 Աշխատանք կատարողը պատվիրատուին է ներկայացնում հրատարակության մակետը` 40 0 տպագրական մամուլ:<br>5.2 Հրատարակության անորակ օրինակները կատարողը վերահրատարակում է իր հաշվին 10-օրյա ժամկետում: | | | | | | | |

** աշխատանքի կատարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ մշակույթի նախարարություն
Հասցեն 0010, ք. Երևան, Վազգեն Սարգսյան
փող.3 Կառավարական տուն 2,
հեռ. 58-51-96, 58-51-78
ՀՎՀՀ 02508054, հ/հ 900011012862
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչությունում

_______________ Ս. Սուրադյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«Անտարես» ՍՊԸ,
Հասցեն ք. Երևան, Մաշտոցի 50 ա/1,
հեռ. 58-76-69,
էլ. փոստ՝ antares@antares.am
ՀՎՀՀ 02519531,
հ/հ 1930032650660100
«Կոնվերս բանկ» ՓԲԸ

_______________ Ա. Մարտիրոսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**Հավելված թիվ 2**

*« 11 » 06 2018 թ. կնքված*

*«ՀՀՄՆ-ՄԱԱԾՁԲ-18/52» ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 79971100-3 | Գրիգոր Անանյան «Մահարիական» | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 540000 | 900000 | 900000 | **900000** |
| 2 | 79971100-3 | Լեւոն Բաշալեան «Նորավեպեր և պատմվածքներ» | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 390000 | 650000 | 650000 | **650000** |
| 3 | 79971100-3 | Գրիգոր Հակոբյան «Հոդվածներ» | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 360000 | 600000 | 600000 | **600000** |
| 4 | 79971100-3 | Մարկո Պոլո «Աշխարհի նկարագրությունը. Հրաշքների մասին» | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 900000 | 1500000 | 1500000 | **1500000** |
| 5 | 79971100-3 | Սիմոն Վրացյան «Հայաստանի Հանրապետություն» | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 660000 | 1100000 | 1100000 | **1100000** |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ մշակույթի նախարարություն
Հասցեն 0010, ք. Երևան, Վազգեն Սարգսյան փող. 3 Կառավարական տուն 2,
հեռ.՝ 58-51-96, 58-51-78
ՀՎՀՀ 02508054, h/h 900011012862
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչությունում

**Ս. Մուրադյան**
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«Անտարես» ՍՊԸ,
Հասցեն՝ ք. Երևան, Մաշտոցի 50 ա/1,
հեռ. 58-66-69,
Էլ. փոստ՝ antares@antares.am
ՀՎՀՀ 02519531,
h/h 1930032650660100
«Կոնվերս բանկ» ՓԲԸ

**Ա. Մարտիրոսյան**
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված թիվ 3
« 11 » 06 2018 թ. կնքված
«ՀՀՄՆ-ՄԱԱԾՁԲ-18/52» ծածկագրով պայմանագրի

**Պայմանագրի կողմ**
«Անտարես» ՍՊԸ,
Հասցեն՝ ք. Երևան, Մաշտոցի 50 ա/1,
հեռ. 58-76-69,
էլ. փոստ՝ antares@antares.am
ՀՎՀՀ 02519531, հ/հ 1930032650660100 «Կոնվերս բանկ» ՓԲԸ

**Պատվիրատու**
ՀՀ մշակույթի նախարարություն
Հասցեն 0010, ք. Երևան, Վազգեն Սարգսյան փող.3
Կառավարական տուն 2,
հեռ. 58-51-96, 58-51-78
ՀՎՀՀ 02508054, հ/հ 900011012862
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչությունում

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
## ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

______________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «__________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

| N | Կատարված աշխատանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | | |
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

______________________
ստորագրություն

______________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց

______________________
ստորագրություն

______________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

**Հավելված թիվ 3.1**

*« 11 » 06 2018 թ. կնքված*

*«ՀՀՄՆ-ՄԱԱՇՁԲ-18/52» ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ______________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ____________-ի
(Պատվիրատուի անունը) (Կատարողի անունը)
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ____________________ -ին կնքված N ________________
(պայմանագրի կնքման ամսաթիվը) (պայմանագրի համարը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. __________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

| Աշխատանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը ներկայացնողից՝

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

# ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ

քաղ. Երևան 02.05.2018թ.

«Անտարես» ՍՊԸ-ն, այսուհետ՝ Պատվիրատու, որը գործում է համաձայն կանոնադրության, ի դեմս տնօրեն Ա. Մարտիրոսյանի, մի կողմից, և Սիմոն Վրացյանի «Հայաստանի Հանրապետություն» գրքի կազմող Արքմենիկ Նիկողոսյանը, այսուհետ՝ Կատարող, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

**Պայմանագրի առարկան**

1.1.Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կազմած Սիմոն Վրացյանի «Հայաստանի Հանրապետություն» գրքի հրատարակման իրավունքները:
1.2.Ստեղծագործության օգտագործման յուրաքանչյուր եղանակի համար Պատվիրատուի հեղինակային իրավունքի թույլտվությունը պարտադիր է:

**Կողմերի պարտականությունները**

2.1.Պատվիրատուն պարտավոր է.
2.1.1.Կատարողին, որպես հոնորար, վճարել 270.0 դրամ, եթե այլ պայմաններ նախատեսված չեն կողմերի միջև:
2.1.2.Գիրքը տպագրել - 200 օրինակով.
2.1.3.Գրավոր տեղեկացնել Կատարողին, եթե անհրաժեշտություն է առաջանում փոփոխություններ կատարել բնագրում:
2.1.4.Ապահովում է գրքի հրատարակչական և պոլիգրաֆիական որակյալ լույս ընծայումը:
2.1.5.Կատարողը պարտավոր է.
2.1.6.Բնագիրը Պատվիրատուին հանձնել՝ վերջնական տեսքով (փոփոխություններ չկատարելու պայմանով), պայմանագրի կնքման պահից չորս ամսյա ժամկետում:

**Այլ պայմաններ**

3.1.Պայմանագիրը ուժի մեջ է մտնում երկու կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև գրքի լույս ընծայման պահը:
3.2.Կողմերի միջև վիճելի հարցերը լուծվում են համաձայն ՀՀ գործող օրենսդրության:

**Կողմերի իրավաբանական հասցեները**

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Անտարես ՍՊԸ, Մաշտոցի 50ա/1, 0009, Երևան
Գործադիր մարմնի ղեկավար
Ա. Մարտիրոսյան

Կ.Տ.
ստորագրություն

**ԿԱՏԱՐՈՂ**
Արքմենիկ Նիկողոսյան
Ն. Քարտ 009669334
տրված 21.12.2017 -ին, վավեր մինչև 21.12.2027
005-ի կողմից

## ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ

քաղ. Երևան 02 05.2018թ.

«Անտարես» ՍՊԸ-ն, այսուհետ՝ Պատվիրատու, որը գործում է համաձայն կանոնադրության, ի դեմս տնօրեն Ա. Մարտիրոսյանի, մի կողմից, և Լևոն Բաշալյանի «Նորավեպեր և պատմվածքներ» գրքի կազմող Արքմենիկ Նիկողոսյանը, այսուհետ՝ Կատարող, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

**Պայմանագրի առարկան**

1.1.Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կազմած Լևոն Բաշալյանի «Նորավեպեր և պատմվածքներ» գրքի հրատարակման իրավունքները:
1.2.Ստեղծագործության օգտագործման յուրաքանչյուր եղանակի համար Պատվիրատուի հեղինակային իրավունքի թույլտվությունը պարտադիր է:

**Կողմերի պարտականությունները**

2.1.Պատվիրատուն պարտավոր է.
2.1.1.Կատարողին, որպես հոնորար, վճարել 135.0 դրամ, եթե այլ պայմաններ նախատեսված չեն կողմերի միջև:
2.1.2.Գիրքը տպագրել - 200 օրինակով:
2.1.3.Գրավոր տեղեկացնել Կատարողին, եթե անհրաժեշտություն է առաջանում փոփոխություններ կատարել բնագրում:
2.1.4.Ապահովում է գրքի հրատարակչական և պոլիգրաֆիական որակյալ լույս ընծայումը:
2.1.5.Կատարողը պարտավոր է.
2.1.6.Բնագիրը Պատվիրատուին հանձնել վերջնական տեսքով (փոփոխություններ չկատարելու պայմանով), պայմանագրի կնքման պահից չորս ամսյա ժամկետում:

**Այլ պայմաններ**

3.1.Պայմանագիրը ուժի մեջ է մտնում երկու կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև գրքի լույս ընծայման պահը:
3.2.Կողմերի միջև վիճելի հարցերը լուծվում են համաձայն ՀՀ գործող օրենսդրության:

**Կողմերի իրավաբանական հասցեները**

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Անտարես ՍՊԸ, Մաշտոցի 50ա, 0009 Երևան
Գործադիր մարմնի ղեկավար
Ա. Մարտիրոսյան

կ.տ.
ստորագրություն

**ԿԱՏԱՐՈՂ**
Արքմենիկ Նիկողոսյան
Ա. Քարտ 009669334
տրված 21.12.2017 -ին, վավեր մինչև 21.12.2027
005-ի կողմից

# ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ

քաղ. Երևան 02.05.2018թ.

«Անտարես» ՍՊԸ-ն, այսուհետ՝ Պատվիրատու, որը գործում է համաձայն կանոնադրության, ի դեմս տնօրեն Ա. Մարտիրոսյանի, մի կողմից, և Գրիգոր Հակոբյան «Հողվածներ» գրքի կազմող Արքմենիկ Նիկողոսյանը, այսուհետ՝ Կատարող, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

## Պայմանագրի առարկան

1.1.Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կազմած Գրիգոր Հակոբյան «Հոդվածներ» գրքի հրատարակման իրավունքները:
1.2.Ստեղծագործության օգտագործման յուրաքանչյուր եղանակի համար Պատվիրատուի հեղինակային իրավունքի թույլտվությունը պարտադիր է:

## Կողմերի պարտականությունները

2.1.Պատվիրատուն պարտավոր է.
2.1.1.Կատարողին, որպես հոնորար, վճարել 90.0 դրամ, եթե այլ պայմաններ նախատեսված չեն կողմերի միջև:
2.1.2.Գիրքը տպագրել - 200 օրինակով:
2.1.3.Գրավոր տեղեկացնել Կատարողին, եթե անհրաժեշտություն է առաջանում փոփոխություններ կատարել բնագրում:
2.1.4.Ապահովում է գրքի հրատարակչական և պոլիգրաֆիական որակյալ լույս ընծայումը:
2.1.5.Կատարողը պարտավոր է.
2.1.6.Բնագիրը Պատվիրատուին հանձնել վերջնական տեսքով (փոփոխություններ չկատարելու պայմանով), պայմանագրի կնքման պահից չորս ամսյա ժամկետում:

## Այլ պայմաններ

3.1.Պայմանագիրը ուժի մեջ է մտնում երկու կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև գրքի լույս ընծայման պահը:
3.2.Կողմերի միջև վիճելի հարցերը լուծվում են համաձայն ՀՀ գործող օրենսդրության:

## Կողմերի իրավաբանական հասցեները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Անտարես ՍՊԸ, Մաշտոցի 50ա/1, 0009, Երևան
Գործադիր տնօրենի ղեկավար
Ա. Մարտիրոսյան

Կ.Տ.
ստորագրություն

ԿԱՏԱՐՈՂ
Արքմենիկ Նիկողոսյան
Ա. Քարտ 009669334
տրված 21.12.2017 -ին, վավեր մինչև 21.12.2027
005-ի կողմից

## ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ

քաղ. Երևան                                                         22.12.2017 թ.

«Անտարես» ՍՊԸ-ն, այսուհետ՝ Պատվիրատու, որը գործում է համաձայն կանոնադրության, ի դեմս տնօրեն Ա. Մարտիրոսյանի, մի կողմից, և «Մախարիական» գրքի հեղինակ Գրիգոր Աճեմյանը, այսուհետ՝ Կատարող, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

**Պայմանագրի առարկան**

1.1.Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կազմած «Մախարիական» գրքի հրատարակման իրավունքները:
1.2.Ստեղծագործության օգտագործման յուրաքանչյուր եղանակի համար Պատվիրատուի հեղինակային իրավունքի թույլտվությունը պարտադիր է:

**Կողմերի պարտականությունները**

2.1.Պատվիրատուն պարտավոր է.
2.1.1.Կատարողին, որպես հոնորար, վճարել 100.0 դրամ հարկերը ներառյալ, եթե այլ պայմաններ նախատեսված չեն կողմերի միջև:
2.1.2.Գիրքը տպագրել - 200 օրինակով:
2.1.3.Գրավոր տեղեկացնել Կատարողին, եթե անհրաժեշտություն է առաջանում փոփոխություններ կատարել բնագրում:
2.1.4.Ապահովում է գրքի հրատարակչական և պոլիգրաֆիական որակյալ լույս ընծայումը:
2.1.5.Կատարողը պարտավոր է.
2.1.6.Բնագիրը Պատվիրատուին հանձնել վերջնական տեսքով (փոփոխություններ չկատարելու պայմանով), պայմանագրի կնքման պահից չորս ամսվա ժամկետում:

**Այլ պայմաններ**

3.1.Պայմանագիրը ուժի մեջ է մտնում երկու կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև գրքի լույս ընծայման պահը:
3.2.Կողմերի միջև վիճելի հարցերը լուծվում են համաձայն ՀՀ գործող օրենսդրության:

**Կողմերի իրավաբանական հասցեները**

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Անտարես ՍՊԸ, Մաշտոցի 50ա/1, 0009, Երևան
Գործադիր մարմնի ղեկավար
Ա. Մարտիրոսյան

կ.տ.
ստորագրություն

**ԿԱՏԱՐՈՂ**
**Գրիգոր Աճեմյան**
**Անձնագիր AM0464328**
տրված 19.10.2011, 004-ի կողմից

# Հեղինակային իրավունքի բացառիկ պայմանագիր

ք. Երևան 25.08.201

«Անտարես» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, ի դեմս գործադիր մար ղեկավար Արմեն Մարտիրոսյանի, այսուհետ՝ Հրատարակիչ, մի կողմից, և Մրուսյակ Գրի (Բախչինյան), այսուհետ՝ Կատարող, մյուս կողմից, փոխադարձ համաձայնությամբ կնքում են ս բացառիկ պայմանագիրը հետևյալի մասին.

## Ընդհանուր դրույթներ

1. Կատարողը Հրատարակչի պատվերով թարգմանում է ֆրանսերենից հայերեն և Հրատարա հանձնում Մարկո Պոլոյի «Աշխարհի բազմազանության մասին» ստեղծագործության, այսու Նյութ, որպես տպագիր և էլեկտրոնային գիրք հրատարակելու բացառիկ իրավունքները:
2. Սույն պայմանագրի առարկա հանդիսացող Նյութի հրատարակման բացառիկ իրավու պատկանում է Հրատարակչին: Կատարողը իրավունք չունի տրամադրելու դրանք որևէ հրատարակչության, որևէ այլ մասնի կամ ԶԼՄ-ի, տեղադրել համացանցում ամբողջովին կ հատվածաբար, վերամշակված կամ փոփոխված ձևով, Հայաստանում կամ արտերկրում, առա Հրատարակչի հետ նախօրոք ձեռքբերված պայմանավորվածության:
3. Կողմերի միջև հաղորդակցությունը կարող է իրականացվել էլեկտրոնային կարգով, Կողմե էլեկտրոնային փոստի միջոցով, ընդ որում Հրատարակչի էլեկտրոնային փոստի հասցեներն hripsime@antares.am-ը և antares.hripsime@gmail.com-ը, իսկ Կատարողինը [illegible]
4. Կատարողը թարգմանությունը հանձնում է Հրատարակչին մինչև 2017 թվ սեպտեմբեր 30 էլեկտրոնային տարբերակով, Unicod տառատեսակով, խմբագրված, ավարտուն տեսք հետագա արմատական փոփոխություններ բացառող վիճակում:
5. Հրատարակիչը պարտավոր է 14 աշխատանքային օրում ուսումնասիրել թարգմանությունը պատշաճ թարգմանության դեպքում Հրատարակիչն իրավունք ունի չընդունել այն:
6. Նյութը կհամարվի ընդունված միայն Կողմերի կողմից հանձնման-ընդունման ակ ստորագրումից հետո:
7. Աշխատանքն ընդունելուց հետո Հրատարակիչը պարտավոր է իրականացնել խմբագրակ աշխատանքները.
8. Աշխատանքի ընթացքում ցանկացած արմատական փոփոխություն կատարելիս Հրատարակ պարտավոր է դրանք քննարկել Կատարողի հետ: Կատարողը պարտավոր է առանց լրացուց վճարումների իրականացնել առաջարկված փոփոխությունները, և կամ անհրաժեշտությ դեպքում իրականացնել նոր թարգմանություն.
9. Կատարողը երաշխավորում է, որ հանդիսանում է Նյութի թարգմանության հեղինակ և չի վերցր այն երրորդ անձանցից: Երրորդ անձանց հետ հնարավոր բոլոր խնդիրների լուծումն իր վրա վերցնում Կատարողը:
10. Հրատարակիչը պարտավորվում է չխախտել Կատարողի անվան իրավունքը և չհրատարակ Նյութը կեղծանունով:
11. Հրատարակիչը պարտավոր է ճիշտ ժամանակին կատարել բոլոր վճարումները:

## Վճարման ձևն ու ժամկետները

12. Սույն պայմանագրի ընդհանուր գումարը կազմում է 955 000 (ինը հարյուր հիսունհինգ հազա ՀՀ դրամ առանց հարկերի նվազեցման:
13. Հրատարակիչը, որպես կանխավճար, վճարում է 477 500 (չորս հարյուր յոթանասունյոթ հազա հինգ հարյուր) ՀՀ դրամ պայմանագրի ստորագրումից հետո 14 աշխատանքային օրում

14. Վերջնավճարը, որը կազմում է է 477 500 (չորս հարյուր յոթանասունյոթ հազար հինգ հարյուր) դրամ, Հրատարակիչը վճարում է նյութի հրատարկումից հետո 14 աշխատանքային օրում
15. Վճարումներն իրականացվում են ՀՀ դրամով, բանկային փոխանցման միջոցով
16. Հրատարակիչը Կատարողին անվճար հատկացնում է 5 օրինակ գիրք՝

**Եզրափակիչ դրույթներ**

17 Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է անժամկետ
18. Պայմանագրով չկարգավորված հարցերը կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
19. Համագործակցության ողջ ընթացքում Հրատարակիչը և Կատարողը պարտավորվում առաջնորդվել փոխադարձ բարեխղճության սկզբունքով.
20. Կողմերի միջև տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով և բանակցությունները արդյունք չեն տալիս՝ դատական կարգով:
21. Պայմանագրի լրացումները, փոփոխությունները, լուծարումը կատարվում է Կողմե համաձայնությամբ:
22. Պայմանագիրը լուծարելու դեպքում վերադարձվում են մինչ այդ վճարված գումարները
23. Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, երկու օրինակից: Օրինակները տրվում Կողմերից յուրաքանչյուրին և ունեն հավասարազոր իրավաբանական ուժ՝

**Կողմերի իրավաբանական հասցեները**

**Հրատարակիչ՝**

«Անտարես» ՍՊԸ
Մ.Մաշտոցի 50ա/1
ՀՎՀՀ 02519531
Գործադիր մարմնի ղեկավար՝
Ա. Մարտիրոսյան

**Կատարող՝**
Արուսյակ Գրինո (Բախչինյան)
ԱՆՁՆԱԳԻՐ 120504400456
տրվ ....... ... . ...... ...... ...... -ին, վավեր մինչև .... . ... . ... . .
.. .... .-ի կողմից